ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2026թ. **N----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշենի 1-ին փողոցը (սկսվում է հ.2/3 հասցեի հարակից տարածքից, հասնում Դավթաշենի 10-րդ փողոց)՝ նրբանցքներով անվանակոչել ազատամարտիկ, ռազմական գործիչ Արսեն Հակոբյանի անվամբ՝ «Արսեն Հակոբյան փողոց», «Արսեն Հակոբյան փողոց, 1-ին նրբանցք» (սկսվում է Դավթաշենի 1-ին փողոցից, Դավթաշենի 5-րդ փողոցի մոտով հասնում այգիներ), «Արսեն Հակոբյան փողոց, 2-րդ նրբանցք» (զուգահեռ է Դավթաշենի 1-ին փողոցի 1-ին նրբանցքին):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻԱՎԱԳԱՆՈՒ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ԳՈՀԱՐ ԲԱԼԴՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ծնված 1962 թվականին ք. Երևանում:

1969–1979 թվականներին սովորել է № 93 միջնակարգ դպրոցում:

1980–1982 թվականներին ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո անցել է աշխատանքի (Պրոֆտեխուսում), ապա գործուղվել է արտադրական միավորումում որպես վարորդ:

1989 թվականին անդամագրվել է Արցախյան շարժմանը և մեկնել է մարտի դաշտ:

1988թ.-ից մասնակցել է Արցախյան շարժմանը:

1990 թվականի հուլիսին գրանցվել է «Սասունցի Դավիթ» կամավորական ջոկատում: Մասնակցել է Երասխավանի, Նոյեմբերյանի, Իջևանի, Կարմիրի, Գորիսի, սահմանամերձ գոտիներում ընդհացող պաշտպանական մարտերին:

1991 թվականի ապրիլից մասնակցել է ԼՂՀ պաշտպանությանը: Մասնակցել է Հադրության, Ասկերանի, Մարտակերտի, Ստեփանակերտի շրջանների պաշտպանությանը:

1992 թվականի հունվարից մասնակցել է Քարվաճառի, Մարտունու, Դաշուշենի, Իշխանաձորի, Հորադիզի, Ջրականի, Լաչինի, Լելե-Թեփեի, Քիրվայի, Լաչինի ազատագրման մարտերին:

1992 թվականի մայիսի 21-ից հունիսի 10-ը մասնակցել է Լաչին–Դռնոց = 1 (Դռնոց) հատվածում մարտական գործողություններին:

1992 թվականի հունիսի 18-ից մասնակցել է Քելբաջարի, Մարտակերտի, Աղդամի շրջանի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:

1992 թվականի հունիսի 18-ից մասնակցել է Մարտակերտի պաշտպանությանը: 1992 թվականի հունիսի 3-ին զոհվել է Մարտակերտ–Մատաղիս պաշտպանական գոտում:

Հուղարկավորվել է Հաղարծնի քաղաքային գերեզմանատանը: 1994թ.-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահական հրամանագրով պարգևատրվել է «Մարտական խաչ» I-ի աստիճանի, 1996թ.-ին ՀՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Մարտական խաչ» II-ի աստիճանի շքանշաններով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ԳՈՀԱՐ ԲԱԼԴՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ